## Երրորդությունը Սուրբ Գրության Մեջ

Երրորդության ապացույցը հաստատված է ամբողջ Աստվածաշնչում: Հայրը (1 Պետրոս 1:2), Որդին (Հովհանես 1:1, 20:28), և Սուրբ Հոգին (Գործք Առաքելոց 5:3-5), յուրաքանչյուրը կոչվում է Աստված: Հաշվի առնելով որ կա միայն մեկ ճշմարիտ Աստված (օրինակ, Երկրորդ Օրինաց 6:4, Հովհանես 17:3), մենք հավատում ենք որ գոյություն ունի մեկ Աստված՝ երեք յուրահատուկ անձնավորություն: Աստվածաշնչունչը ներկայացնում է Աստվածային հատկանիշները այն բոլոր երեք անձանց:

Որոշ Համարներ.

- Աստուած (Մեկ Աստված) ասաց. «Մարդ ստեղծենք *մեր* (Հոր, Որդու, և Սուրբ Հոգու - Երեք Անձ) կերպարանքով ու նմանութեամբ. (Ծննդոց 1:26)
- Եւ Աստուած մարդուն ստեղծեց *Իր* (Մեկ Աստված) պատկերով, Աստծու պատկերով ստեղծեց նրան, արու և էգ ստեղծեց նրանց: (Ծննդոց 1:27)
- Եվ Եհովա Աստուած ասաց. «Ահա Ադամը դարձաւ *մեզ* նման մէկը, նա գիտի բարին և չարը:(Ծննդոց 3:22)
- *Եկեք* իջնենք, և խառնենք նրանց լեզուն այնպէս, որ ոչ մէկը չհասկանայ իր ընկերոջ ասածը: (Ծննդոց 11:7)
- Եվ *Եհովան* Սոդոմի և Գոմորի վրա ծծումբ և կրակ թափեց *Եհովայի կողմից երկնքից*... (Ծննդոց 19:24)
- *Տէրն իմ Տիրոջն ասաց*. «Նստի՛ ր իմ աջ կողմում, մինչև որ քո թշնամիներին ոտքերիդ պատուանդան դարձնեմ: (Սաղմոս110:1, Մաթեվոս 22:44)
- Գնացէ՛ ք ուրեմն բոլոր ազգերին աշակերտեցէք, նրանց մկրտելով *Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով:* (Մաթեվոս 28:19)
- Իսկ *Որդուն* ասում է. «Քո աթոռը ո՛ վ *Աստուած*, մինչև հավիտեանս հավիտենից է՝ . քո թագաւորութեան գավազանը ուղիղ գավազան է: Դու սիրեցիր արդարությունը և ատեցիր անօրէնությունը. սրա համար օծեց քեզ , *ո՛ վ Աստուած, քո Աստուածը* ուրախության յուղով... (Եբրաեցիս 1:8-9, Սաղմոս 45:7)

---

*Հայր:* Փիլ. 1:2, Եսայիա 64:8, 3 Թագ. 8:27, 1 Հով. 3:20, Ղուկ. 3:20, Մաթ. 3:17
*Որդի:* Հով. 1:1,14, Հով. 1:3, Մաթ. 28:20, Հովհ. 16:30, 21:17, Ղուկ. 22:42, Ղուկ. 5:20, 7:48
*Սուրբ Հոգի:* Գործք 5:3-4, Հոբ 33:4, 26:13, Սաղ. 139:7-10, 1 Կոր. 2:10-11, 1 Կոր. 12:11, Գործք. 13:2

## Հիսուսն Աստված է՝

Ամբողջ Աստվածաշունչը վկայում է Հիսուսի մասին (Ղուկաս 24:27,44, Հովհաննես 5:39, Եբրայեցիս, 10:7): Մարգարեները մարգարեացան Նրա մասին (Գործք 10:43): Հայրը վկայեց Նրա մասին (Հովհաննես 5:37, 8:18): Սուրբ Հոգին վկայում է նրա մասին (Հովհաննես 15:26): Հիսուսի Գործերը վկայեցին իր մասին (Հովհաննես. 5:36, 10:25). Բազմությունը վկայեց նրան մասին (Հովհաննես 12:17): Եվ Հիսուս վկայեց ինքն իր մասին (Հովհաննես 14:6, 18:6):

Հիսուսը Աստված է՝ մարմնում (Հովհաննես 1:1,14): Նա լիովին Աստուած է և լիովին մարդ (Կողոսացիս 2:9): Այսպիսով, նա ունի երկու էություն, Աստվածային և մարդկային: Նա ոչ թէ կիսով չափ Աստուած է, կամ կիսով չափ մարդ, այլ Նա 100% Աստուած է՝ և 100% մարդ: Նա երբեք չի կորցրել իր Աստվածային էությունը: Նա գոյություն ուներ Աստծո կերպարանքով, և երբ նա դարձավ մարդ, Նա իր Աստվածային էության վրա հագավ մարդկային բնություն (Փիլիպեցիս 2:5-11): Հենց այս պահին երկնքում կա մի մարդ, Յիսուս, որ Միջնորդ է մեր և Հայր Աստծո միջև (1 Տիմոթեոս 2:5): Հիսուսը մեր փաստաբան է Հոր առաջ (1 Հովհաննես 2:1). Նա մեր Փրկիչն է (Տիտոս 2:13). Նա մեր Տերն է՝ (Հռովմայեցիս 10:9-10). Նա այն չէ, ինչպես որոշ աղանդներ ուսուցանում են, թէ մի հրեշտակ որ դարձավ մարդ, (Եհովայի վկաներ) կամ դևի եղբայրը (Մորմոնիզմ): Նա ամբողջությամբ Աստուած է և ամբողջությամբ մարդ, Ստեղծողը, և Արդարացնողը: Նա Հիսուսն է:

---

ՍԻՐԵԼԻՆԵ՛Ր, ԱՄԵՆ ՋԱՆՔ ԱՐԻ ՈՐ ԳՐԵՄ ՁԵԶ ՄԵՐ ՀԱՍԱՐԱԿԱՑ ՓՐԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ, ՀԱՐԿ ԵՂԱՎ ԻՆՋ ՈՐ ԳՐԵՄ ՁԵԶ ԵՒ ՀԱՂՈՐԴԵՄ, ՈՐ ՊԱՅՔԱՐԷՔ ՀԱՎԱՏՔԻ ՀԱՄԱՐ, ԱՅՆ ՀԱՎԱՏՔԻ, ՈՐ ՄԻ ԱՆԳԱՄ ԸՆԴՄԻՇՏ ԱՎԱՆԴՎԵՑ ՍՐԲԵՐԻՆ: ՔԱՆԻ ՈՐ ՁԵՐ ՄԷՋ ՍՈՂՈՍԿԵԼ ԵՆ ՈՄԱՆՔ, ՈՐ ՎԱՂՈՒՑ ԻՍԿ ՍԱՀՄԱՆՈՒԱԾ ԷԻՆ ՍՈՅՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ, ԱՄԲԱՐԻՇՏ ՄԱՐԴԻԿ, ՈՐ ՄԵՐ ԱՍՏԾՈՒ ՇՆՈՐՀԸ ՎԵՐԱԾԵՑԻՆ ԱՆԱՌԱԿՈՒԹԵԱՆ ԵՒ ՈՒՐԱՑԱՆ ԱՅՆ ՄԻԱԿ ԻՇԽԱՆԻՆ ԱՍՏԾՈՒՆ ԵՎ ՄԵՐ ՏԻՐՈՋԸ՝ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻՆ:
ՀՈՒԴԱ 3-5

# ՈՎՔԵՐ ԵՆ ՄՈՐՄՈՆՆԵՐԸ և ԵՀՈՎԱՅԻ ՎԿԱՆԵՐԸ



## 2 ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐ 11:3-4

2 Կորնթացիս 11:3-4, Պողոս Առաքյալը զգուշացնում է Կորնթացիների Եկեղեցուն երեք նախազգուշացնող նշաններն որ պետք է հետևենք: Մեկ այլ Յիսուս, մեկ այլ հոգի, և մեկ այլ ավետարան: Այսօր մեր ներկա օրերում ոմանք վկայում են մեկ այլ Յիսուս, մեկ այլ հոգի, և մեկ այլ ավետարան, իսկ այս բրոշյուրը կօգնի ձեզ տարբերելու իսկականը կեղծից:

## Զգուշացում

Կան երկու աղանդներ որոնք գնում են դռնից դուռ: Մորմոնները և Եհովայի վկաները: Նրանք պնդում են, որ իրենք կրոնով Քրիստոնյա են, բայց ոչ:

## Մորմոնները Դասավանդում են

- Աստված նախկինում եղել է մարդ մի այլ մոլորակում, և Մորմոն անդամները կարող են դառնալ աստվածներ իրենց սեփական աշխարհներում:[1]
- Կան բազմաթիվ շատ աստվածներ:[2]
- Երրորդությունը երեք առանձին աստվածներ են:[3]
- Մուտքը դեպի երկինք միայն կարող է լինել Աստուծո և Մորմոն Մարգարե Ջոզեֆ Սմիթի համաձայնությամբ:[4]
- Աստված ունի մարդկային մարմին և ոսկորներ:[5]
- Աստված ամուսնացած է և արտադրում է հոգևոր երեխաներ ունենալով ֆիզիկական հարաբերություն իր կնոջ աստվածուհու հետ:[6]
- Հիսուսը, Սատանան և բոլորս, հոգևոր եղբայրներ և քույրեր ենք նախապես գոյություն չունեցող հոգևոր կյանքում:[7]
- Աստուած հարաբերություն է ունեցել Մարիամի հետ որպեսզի Հիսուսը մարմնով ծնվի:[8]
- Դու պետք է թափես քո սեփական արյունը որոշ մեղքերի թողության համար:[9]
- Բարի գործերն անհրաժեշտ են մեղքերի ներման համար:[10]

Զգուշացեք: Հազվադեպ են նրանք նշում այդ բարձրագույն վարդապետությունները: Ուստի, դուք իսկապես չգիտեք, թե ինչ են նրանք ուսուցանում մինչև երկար անց իրենց կմասնակցեք:

## Եհովայի վկաները դասավանդում են

- Նրանց եկեղեցին Աստծո մարգարեի կազմակերպությունն է:[11]
- Հիսուսը վերադարձավ աննկատելիորեն 1914 թ.[12]
- Արյան փոխանակումը մեղք է:[13]
- Սուրբ Հոգին Աստծո անաչառ ակտիվ «հոսանք» ուժն է:[14]
- Միայն իրենց Եկեղեցու անդամները պետք է փրկվեն:[15]
- Հիսուսը եղել է հրեշտակ, որը դարձավ մարդ:[16]
- Հիսուսը ֆիզիկապես մեռելներից յարություն չի առել:[17]
- Չկա Երրորդություն:[18]
- Բարի գործերն անհրաժեշտ են մեղքերի ներման համար:[19]

Զգուշացեք: Եհովայի վկաները ցանկանում են սկսել տնային «Աստվածաշնչի ուսումնասիրության» ձեզ հետ: Թե ինչ նրանք իսկապես ուզում են որ դուք մասնակցեք իրենց աղանդին:

## Զգույշ Լինել

Այս խմբերը ոչ-քրիստոնեական աղանդներ են, որովհետև նրանք հերքում են ճշմարիտ Աստվածաշնչյան վարդապետությունները Հիսուսի և փրկության: Առաջին, Մորմոններն ասում են Հիսուսը դևի եղբայրն է.[7] Եհովայի վկաները սովորեցնում են, որ Հիսուսը Միքաէլ հրեշտակն է, որ դարձել է մարդ:[16] Այդ աստվածաշնչյան ուսմունքներ չեն: Երկրորդ, ձեր փրկությունը կարող եք ձեռք բերել Աստծո հետ համագործակցելով և բարի գործեր անելով: Աստվածաշունչը ասում է, որ փրկությունը անվճար Աստծո պարգև է: Աստվածաշունչը դատապարտում է մեր գործերի ավելացումը Յիսուսի ավարտած զոհին:[21] Գաղատացիս 2:21-ում ասում է, «եթե արդարությունը գալիս է օրենքից» ապա Հիսուսը իզուր մահացավ: Փրկությունը գալիս է Աստծո շնորհքով հավատքի միջոցով միայն, ոչ թե մեր գործերով,[21] որոնք անմաքուր են:[29] **Պարզապես, նրանք յուրաքանչյուրը քարոզում են կեղծ պադգամ փրկության վրայով:**

## Աստվածաշունչը սովորեցնում է

Կա միայն մեկ Աստված.[23] Աստված Հոգի է.[24] Հիսուսի զոհաբերությունը մաքրում է ամէն մեղքից.[25] Հիսուսը Աստծո միակ ճանապարհն է.[26] Բոլոր նրանք, ովքեր ընդունում են Հիսուսին որպես Փրկիչ կփրկվեն.[27] և Հիսուսը Աստված է` մարմնով[20] որը համբարձվեց մեռելներից, այն նույն մարմնով որ մահացավ:[28] Սրանք այն որոշ կարևոր կետերն են, որ Քրիստոնեական եկեղեցին միշտ հավատացել է: Այս ճշմարտությունը երկու աղանդները աղավաղել են, և այդպիսով շատերին հավերժական կորուստի են առաջնորդում: Ինչու՞, Որովհետև ...

Միայն Աստվածաշնչի Յիսուսը կարող է փրկել, ոչ թե սատանայի եղբայրը (Մորմոնիզմ), և ոչ էլ մի հրեշտակ որը մարդացավ (Եհովայի վկաներ): Հավատքը գործում է միայն այն ժամանակ, երբ որ հավատանք այն մեկին ով ճշմարիտ է:

Մորմոնները և Եհովայի վկաները լավ մարդիկ են, և մենք սիրում ենք նրանց: Սակայն, նրանք մոլորեցնում են:[30] Նրանք չգիտեն, որ ճշմարիտ ավետարանը նշում է մահը, թաղումը, և հարությունը Հիսուսի մեր մեղքերի համար որով մենք ներում ստացանք Աստծուց միայն հավատքով (հավատք ճշմարիտ Յիսուսով): Սատանան կուրացրել է նրանց:[30] Հիսուսն ասաց, եթե կույրը կույրին առաջնորդի, երկուսն էլ կնգնեն փոսը:[31] Ահա թե ինչու է այս Քրիստոնեական ծառայությունը բացահայտում այս աղանդներին, այնպես որ դուք չեք կարող խաբվել:

Եթե ցանկանում ես համոզված լինել քո մեղքերի ներման համար և ունենալ խաղաղություն Աստծո հետ, ապա դու պետք է գիտակցես որ դու մեղանչել ես Աստծո դեմ,[32] և առանձնացված ես Նրանից:[33] Այնուհետև, կանչիր Յիսուսին քո կյանքում, խնդրիր նրան որպեսզի ների քեզ քո մեղքերից, և փրկի քեզ: Նա խոստացել է:[27] Նա Փրկիչ ու Տէր է, և նա մոտ է այնքան ինչպես քո սրտի կանչը: Այնուհետև կարդացեք ձեր Աստվածաշունչը և գնացեք եկեղեցի: Համենայնդեպս այժմ դուք գիտեք որոնցից երկուսին չմիանալ:


### ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ՄՈՐՄՈՆՆԵՐԻ ԳՐՎԱԾՔՆԵՐԻՑ

1)Mormon Doctrine by Bruce McConkie, p. 321. 2)Ibid., p. 163. 3)Ibid., p. 319. 4)Brigham Young, Journal of Discourses, Vol. 7, P.289. 5)Doctrine and Covenants 130:22. 6)McConkie, p. 516. 7)Ibid., pp. 192;589. 8)Ibid., pp.741-742; The Seer, p. 158. 9)Doctrines of Salvation by Joseph Smith, Vol. I p. 135. 10)Articles of Faith, p. 79.

### ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԵՀՈՎԱՅԻ ՎԿԱՆԵՐԻ ԳՐՎԱԾՔՆԵՐԻՑ

11)The Watchtower, April 1, 1972, pp.197, 200. 12)You Can Live Forever in Paradise on Earth, 1982, p. 147. 13)Reasoning from the Scriptures, pp 70-76. 14)Holy Spirit, 1976, p. 11. 15)Ibid., Feb. 15, 1979, p. 30. 16)Aid to Bible Understanding, p. 1152; New Heavens and New Earth, p. 30. 17)You Can Live Forever...pp. 143, 144, 172. 18)Let God be True, p. 101. 19)Studies in the Scriptures, Vol. I pp. 150,152.

### ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻՑ (ԱՍՏԾՈՒՑ)

20)Հովհ. 1:1,14, 8:58, 10:30; Կող. 2:9. 21)Հռոմ. 6:23;3:28;4:5. Եփե. 2:8-9. 22)Գաղ.. 3:1-2;5:1-4. 23)Եսայիա 43:10; 44:6, 8. 24)Հովհ. 4:24. 25)1 Հովհ. 1:7,2:2. 26)Հովհ. 14:6. 27)Հովհ. 1:12; Հռոմ. 10:9-10. 28)Ղուկաս 24:39; Հովհ. 2:19-21. 29) Եսայիա 64:6 30)2 Կոր. 4:3-4. 31) Ղուկաս 6:39. 32) Հռոմ. 3:23, 5:12. 33) Եսայիա 59:2.


©www.714SmallGroup.org

Additional Resources Please visit
www.carm.org
www.watchman.org